ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N«ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/15-1»

ք. Դիլիջան «08» 082019թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,Տավուշ Հոլդինգ,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերյոժա Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Դիլիջան համայնքի Հովք բնակավայրում համայնքային շենքի դուռ - պատուհանների փոխում և տարածքի հիմնանորոգում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվի նհամապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվումէ՝ 15.10.2019թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրաարդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերել ուղեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավուն քունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավորվում է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչևայլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[25]

---

[25] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, Փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքնընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻԳԻՆԸԵՎՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքիկամպայմանագրիօրացուցայինգրաֆիկովնախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.[29]

ՆԳ-ն շինարարական ծրագրի նպխահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետումնախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսիչափով:[30] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[29] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝՝համապատասխան չափաբաժնի գինն է:*

[30] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դիլիջանի համայնքապետարան	,,Տավուշ Հոլդինգ,, ՍՊԸ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	Տավուշի մարզ, գ. Ոսկեվան 2-րդ փ., շենք 32
ՀՎՀՀ 07618909	ՀՎՀՀ 07405006
ՀՀ 900402081013	ՀՀ 24135008815900
ՀՀ ֆինանսների նախարարության	Յունի բանկ Աջափնյակ մ/ճ
Գործառնական վարչություն	
Համայնքի ղեկավար	
Ա. Սանթրոսյան	Տնօրեն Ս.Բարսեղյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելվածթիվ 1
«08»08 2019 թ. կնքված
«ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/15-1»ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*[35]

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԴՈՒՌ – ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽՈՒՄ, ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Հիմնա-վորում	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քա-նակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհա-նուր ար-ժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6	7
		1. Քանդման աշխատանքներ				
1	23-174	Դռների քանդում	100 մ^2	0.1092	125.80	13.74
2	23-172	Պատուհանների քանդում /փայտե/	100 մ^2	0.0738	211.55	15.61
3	23-163	Չորսուներից հատակների քանդում	100 մ^2	0.374	49.88	18.66
4	5-3վ	Փայտե հատակի հիմնակմախքի քանդում	100 մ^2	0.374	6.91	2.59
5	23-166	Կերամիկական սալիկ.հատակ.քանդում	100 մ^2	0.124	45.27	5.61
6	11-223	Պատերի գաջի սավաղի քանդում	100 մ^2	0.250	18.97	4.74
7	14-320	Պատի մաքրում հին ներկից /յուղաներկ և սոսնձաներկ/	100 մ^2	1.076	16.13	17.36
8	23-227	Շին.աղբի հավաքում, տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	5.8	0.47	2.72
9	Գ310 - 11	Տեղափոխում 3 կմ	տն	5.8	2.65	15.39
		2.Հատակներ				
1	11-2.	Բնահողի տոփանում խճով 15-20մմ	100մ^2	0.3770	36.49	13.76
2	11-11.	բետոնե նախաշերտի կառուցում 80 մմ B-12,5	մ^3	3.00	38.65	115.94
3	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ^2	0.789	132.81	104.79
4	11-191	Լամինատե հատակների կառուցում-8 մմ հաստ /սպունգով և շրիշակներով/լավորակ	մ^2	37.70	5.59	210.72
5	11-135	Հատակների կառուցում սալիկներից /Պրեսգրանիտե սալ /600*600/սոսինձ-5 մմ	100 մ^2	0.277	1325.88	367.27
6	11-135	Կերամիկական սալիկներից հատակների կառուցում սոսինձ-4 մմ 330*330	100 մ^2	0.135	659.54	89.04
7	15-82	Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ սոսինձի վրա	100մ^2	0.0272	1360.53	37.01
		3. Բացվածքներ				
1	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադ-րում /բացվող/ (հայկ.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ,4+4 ապակեփաթեթ	մ^2	4.04	31.71	128.1
2	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադ-րում /չբացվող/ (հայկ.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ,4+4 ապակեփաթեթ	մ^2	5.36	20.85	111.7

[35] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

3	Շուկա	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում 6 սմ (հայկ պրոֆիլ, սպիտակ գույն)	մ²	17.4	37.36	650.03
4	Շուկա	Մետաղապլաստե միջնորմ, ամրացման կոնստրուկցիայով սանհանգույցներում 6 սմ (հայկ պրոֆիլ, սպիտակ գույն)	մ²	2.7	40.83	110.25
5	7-51.	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ²	2.05	3.05	6.2
6	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /25 սմ լայնութ./	գմ	8.2	2.54	20.84
7	14-172	Փայտե պատուհանների յուղաներկում մաքրելով հին ներկը	100 մ²	0.048	184.81	8.87
		4.Հարդարման աշխատանքներ				
1	4-79	Կախովի առաստաղի իրականացում մետաղ կարկասի կառուցումով/պլաստմաս գունավոր/	մ²	78.9	3.99	314.45
2	15-277-1	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 մ²	0.1240	574.27	71.21
3	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելաված որակի/g	100 մ²	0.1530	238.05	36.42
4	15-256	Պատերի սվաղում g/ավազային շաղախով	100մ²	0.2310	179.70	41.51
5	11-57վ	Պատի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 մ քառ	100 մ²	0.510	267.68	136.52
6	15-568	Շեպերի յուղաներկում	100մ²	0.1740	119.62	20.81
7	15-82	Պատերի երեսապատում կերամիկա-կան սալիկներով 200*300 - սոսինձ-4մմ հաստ	100մ²	0.231	791.14	182.75
8	15-660	Պատերի ներկում լատեքսով լավորակ	100 մ²	1.729	115.23	199.24
9	15-210	Արտաքին պատուհանագոգերի արցուն քաթափրի տակ g/ավազային սվաղ,շեպերի սվաղում	100մ	0.209	63.08	13.18
10	12-280	Պատուհանագոգերի ծածկ ցինկապատ թիթեղից 0,55 մմ	100մ²	0.012	411.19	4.93
11	15-521 15-603	Արտաքին պատերի և շեպերի ներկում ֆասադային ներկով մածկապատումով 0,5 մմ	100 մ²	0.280	111.09	31.11
12	8-140	Միջնորմների կառուցում 20 սմ հաստ. պեմզաբլոկից	մ³	2.80	23.11	64.72
13	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.0320	483.25	15.46
		Ցանցավոր ցանկապատ 15,0 մ				
1	7-320 k=0,3	Մետաղական ցանկապատի կառուցում /հողային աշխատանքներով/	մ	15.0	1.49	22.32
2	Շուկա	Բետոն Վ-7.5	մ³	0.65	35.34	22.97
3	Շուկա	Մետաղական խողովակ 60*60*2	մ	14.4	1.99	28.61
4	Շուկա	Մետաղական խողովակ 40*20*2	մ	48.0	0.97	46.33
5	Շուկա	Մետաղական խողովակ 20*10	մ	128.0	0.38	48.79
6	Շուկա	Ամրան Ա-2 - 16 մմ	տն	0.0154	474.88	7.31
7	Շուկա	խցան 60*60	հատ	12.0	0.38	4.57
8	Շուկա	խցան 20*10	հատ	160.0	0.02	2.44
9	15-614	Մետաղական ցանկապատի յուղաներկում	100 մ²	0.14	123.19	16.63
		Մետաղական դռնակ -1 հատ				
1	9-49.	Մետաղական դռնակի պատրաստում և տեղադրում	տն	0.01	264.45	2.64
2	Շուկա	Մետաղական խողովակ 40*20*2	մ	3.2	0.97	3.09
3	Շուկա	Մետաղական խողովակ 20*10	մ	4.0	0.38	1.52
4	Շուկա	Ծխնի	զույգ	2.0	0.76	1.52
5	Շուկա	Բռնակ	հատ	2.0	0.49	0.98

6	15-614	Մետաղական ցանկապատի յուղաներկում	100 մ^2	0.01	123.19	0.62
		Ջրագծի ներքին տեղամաս				
1	16-260	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմPN10	մ	12.0	2.68	32.14
2	16-260	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմPN10 /տաք ջուր/	մ	4.0	3.10	12.39
3	16-134	Փականների տեղադրում d=15 մմ	հատ	3.0	4.53	13.59
4	17-49	Լվացարանի - խառնիչի տեղադրում	հատ	3.0	6.76	20.28
5	ե16-130	Զուգարանային ծորակի տեղադրում d=15մմ	հատ	2.0	4.87	9.74
6	Շուկա	կցամաս պտուտակով 16 / 1/2	հատ	8.0	0.47	3.78
7	Շուկա	Եռաբաշխիչ 20 մմ	հատ	3.0	0.12	0.37
8	Շուկա	Արտուղղում d=20մմ	հատ	4.0	0.07	0.29
9	16-39	Պողպատե պաշտպանիչ պատյան d =40մմ	մ	0.8	2.44	1.95
10	Շուկա	Պլաստմասե շրջակապ 20 / 16մմ	հատ	12.0	0.09	1.10
11	Շուկա	Չժանգոտվող ճկախողովակ d=15մմ	հատ	8.0	1.04	8.29
12	8-615-2	էլջրատաքացուցիչի տեղադրում/50լ/	հատ	1.0	63.17	63.17
		Կոյուղագծի ներքին տեղամաս				
1	16-34	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=100մմ-3,2 մմ	մ	9.0	1.91	17.16
2	16-33	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=50մմ-2մմ	մ	8.0	1.22	9.77
3	17-22	Մանկական լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	2.0	16.45	32.89
4	17-56	Զուքարակոնքի /մանկական/տեղադրում	կ-տ	2.0	30.16	60.31
5	17-74	լոգնոց 900*900 տեղադրում	կ-տ	1.0	36.12	36.12
6	Շուկա	Եռաբաշխիչ 100*100*100	հատ	2.0	0.83	1.65
7	Շուկա	Արտուղղում 90 Ե d=100մմ	հատ	3.0	0.45	1.34
8	Շուկա	Արտուղղում 90 Ե d=50մմ/արժեք/	հատ	5.0	0.13	0.67
9	23-117	Անցքերի բացում	100հտ	0.02	54.57	1.09
10	Շուկա	Պոլիվ անցում 100/50 մմ/արժեք/	հատ	2.0	0.32	0.63
11	Շուկա	ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	2.0	1.83	3.66
12	Շուկա	Ռետինե միջադիր	հատ	6.0	0.46	2.74
13	Շուկա	ճկախողովակ d=100 մմ	հատ	2.0	2.44	4.88
14	1-965	Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի	մ^3	2.0	4.19	8.37
15	1-969	Բնական հիմնատակի կառուցում	մ^3	0.5	1.15	0.57
16	23-1.	Փափուկ բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	1.0	1.82	1.82
17	1-969	Ավելորդ բնահողի փռում տեղում	մ^3	0.5	1.14	0.57
18	Շուկա	Ստուգիչ 100 մմ	հատ	1.0	1.03	1.03
19	Շուկ132	Օղագոտի 50 մմ	հատ	4.0	0.16	0.65
20	Շուկ132	Օղագոտի 100 մմ	հատ	2.0	0.33	0.65
		Ներքին լուսավորություն				
1	8-599-1	Լյումենեսցենտային լուսատուի տեղադրում ԼՊՕ - 2*36	հատ	6.0	6.32	37.94
2	8-593-1	Առաստաղային լուսատուի տեղադրում 13վտ /կետային,ներկառուցվող/էներգախնայող	հատ	4.0	5.07	20.28
3	8-591-2	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	4.0	1.51	6.05
4	10-975-8	Տուփ բաժանարար	100հտ	0.04	108.41	4.34
5	10-975-8	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.10	116.03	11.60
6	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2.5մմԱ	100 մ	0.72	49.37	35.54
7	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 3*2.5մմԱ	100 մ	0.32	71.17	22.77
8	23-120	Ակոսների փորում 30*15	100մ	0.62	35.28	21.88
9	15-247	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ^2	0.019	241.75	4.59
10	8-603-1	Պատի լուսատուի տեղադրում էներգախնայող ամպով 1*25	հատ	1.0	4.94	4.94
11	8-562-1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/ 8 տեղանոց	հտ	1.0	6.00	6.00
12	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 6 Ա	հատ	4.0	3.03	12.12
13	8-525-1	Դիֆերեն հոսանքի անջատիչ 20Ա	հատ	1.0	3.82	3.82
14	21-59 K=0.5	Գոյություն ունեցող լուսատուների ապամոնտաժում	հատ	4.0	1.47	5.89
15	8-417-1	Պլաստմասե ճկախողովակ. d =16մմ	100 մ	0.25	92.72	23.18

16	8-591-7	Երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,Iցր8=16Ա երրորդ հողանցմավ կոնտուրով/ներքին տեղադրման/	հատ	3.0	1.78	5.34
17	8-591-7	Կրկնակր երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,Iցր8=16Ա երրորդ հողանցմավ կոնտուրով/ներքին տեղադրման/	հատ	2.0	2.04	4.08
18	8-591-7	Երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,Iցր8=16Ա երրորդ հողանցմավ կոնտուրով/ներքին տեղադրման/ IP 44 պաշտ աստիճանով	հատ	1.0	2.30	2.30
		Ընդամենը				4000.00

* Կապալառուն աշխատանքները կատարում է Դիլիջան համայնքի Հովք բնակավարյում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար
Ա. Սանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Տավուշ Հոլդինգ,, ՍՊԸ
Տավուշի մարզ, գ. Ոսկեվան 2-րդ փ., շենք 32
ՀՎՀՀ 07405006
ՀՀ 24135008815900
Յունի բանկ Աջափնյակ մ/ճ

Տնօրեն Ս.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 2
«08»08 2019թ. կնքված
«ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/15-1»ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ
«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԴՈՒՌ – ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽՈՒՄ, ՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքների առանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	«Դիլիջան համայնքի Հովք բնակավայրում համայնքային շենքի դուռ - պատուհանների փոխում և տարածքի հիմնանորոգում»	08.08.2019թ.	15.10.2019թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար
Ա. Սանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Տավուշ Հոլդինգ,, ՍՊԸ
Տավուշի մարզ, գ. Ոսկեվան 2-րդ փ., շենք 32
ՀՎՀՀ 07405006
ՀՀ 24135008815900
Յունի բանկ Աջափնյակ մ/ճ

Տնօրեն Ն. Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«08»08 2019 թ. կնքված
«ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-19/15-1»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	4561100	«Դիլիջան համայնքի Հովք բնակավայրում համայնքային շենքի դուռ - պատուհանների փոխում և տարածքի հիմնանորոգում»	0	0	0	0	0	0	0	2000000	4000000	4000000	4000000	4000000	**4000000**

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402081013
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար
Ա. Սանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Տավուշ Հոլդինգ,, ՍՊԸ
Տավուշի մարզ, գ. Ոսկեվան 2-րդ փ., շենք 32
ՀՎՀՀ 07405006
ՀՀ 24135008815900
Յունի բանկ Աջափնյակ մ/ճ

Տնօրեն Մ.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրընդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն